

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

ՌՈՒՍ ԲԱՆԱՍԵՂԾՆԵՐԻ ԵՐԿԵՐԸ
ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

ՌՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԵՐԿԵՐԸ
ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌՈՒԲԵՆ ԹԱՐՈՒՄԵԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ



ԵՐԵՒԱՆ
ՍԻԵ

ՀՏԴ 82-145:821.19:821.161.1-1
ԳՄԴ 84(2)-5
Մ 350

Թարումեան (Ռուբեն Հակոբյան)

Մ 350 Մարգարեներ. Ռուս բանաստեղծների երկերը մարգարենների մասին / Թարգմ.՝ Ռուբեն Թարումեան (Ռուբեն Հակոբյան). - Եր.: Հեղ. հրատ., 2025, – 28 էջ:

Ժողովածուի մեջ ներառված են ռուս բանաստեղծների՝ մարգարենների մասին երկերը Ռուբեն Թարումեանի թարգմանություններով, եւ ներածականով:

ՀՏԴ 82-145:821.19:821.161.1-1
ԳՄԴ 84(2)-5

ISBN 978-9939-0-5390-5

© Պատճենաշնորհի, Ռուբեն Թարումեան
(Ռուբեն Հակոբյան), 2025

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Հայերեն *մարգարե* բառի համարժեքն է հունարեն *προφήτης* [պրոֆետես], որը ծագում է *φημί* «ասել, խոսել» բառից (տառաացիորեն՝ «նախա-ասող»), եբրայական *מָרְגָּר* [մարի], հոգնակին՝ *מַרְגָּרִים* [մեֆիմ] բառերին*:

Ցանկացած կրոնում այս կամ այն կերպ կա *մարգարե* հասկացությունը: Դա հայտնի է գրադաշտությունից (մարգարե էր համարվում Չրադաշտը), հունական մշակույթից (հիշենք Դելփիքի գուշակին՝ Դելփյան պատգամախոսին), բայց առավել համակարգային բնույթ է ստացել մարգարեի գաղափարը եբրայական կրոնում եւ դրա ածանցյալ քրիստոնեությունում եւ մահմեդականությունում: Այստեղ դա ունի ավելի բարդ բովանդակություն, քան սոսկ «ապագան գուշակողը»: Նա աստծո կամքի արտահայտող է եւ որպես այդպիսին՝ ճշմարտության, բարոյականության ազդարար: Այս է պատճառը, որ մարգարեի կերպարը հաճախ է հայտնվում տարբեր ազգերի գրականություն մեջ, երբ քննարկվում են կյանքի ճշմարիտ ուղով ընթանալու խնդիրները:

Առավել հստակ է դա դրսևորվել ԺԹ դարի ռուս գրականության ու հատկապես՝ բանաստեղծության մեջ, ուր շոշափվել է նաեւ բանաստեղծի եւ մարգարեի գործունեության կապը: Այլ կերպ ասած՝ ռուսական գրականության մեջ *մարգարե* հասկացությունը ստացել է ավելի վերացական արժեք՝ կապվելով բանական մարդու, քաղաքացու էության հետ, որը հաճախ հակադրվում է հանրությանը, մերժվում է նրա կողմից: Մի շարք ռուս հեղինակներ՝ Գ. Դերժավինը, Կ.

* Վերնագրում բառը բերված է դասական ուղղագրությամբ: *Մարգարե* բառը Հ. Աճառյանը փոխառություն է համարում պահլավերեն (այն է՝ միջին պարսկերեն) չավանդված **mārgar* բառից, որն իր հերթին բխեցվում է ավեստյան *magra-kara* բառից, կազմված «բառ. Ս. Գրքի խոսքերը» եւ «գործող, կերտող» բաղադրիչներից, որից առաջինը կապվում է *magran* «կանխասաց, կանխագուշակ, մարգարե» բառի հետ, որը Գաթաներում գործածվում է միայն Չրադաշտի համար: Նկատենք, որ հունարենում նույնպես կա այս բառի համարժեքը՝ *μάντις* «մարգարե», որն, ինչպես եւ նախորդը, կարելի է բխեցնել նախալեզվի **men* «մտածել» ձևից, որի *n*-ն աճական է, իսկ բուն արմատն է **me-*: Յու. Պոկոռնին դա կապում է հայերեն *իմանալ* բառին: Փաստորեն, հայերեն բառը կարելի է դիտել, որպես **men* արմատի *t*-ով աճած տարբերակ, ինչը կարող էր տեղի ունենալ արդեն իսկ հայերենում՝ առանց փոխառության (համեմատեք նաեւ հայերեն *իմաստ* բառի հետ), իսկ բառի երկրորդ մասը նույնն է հայերեն *կերտ* բառի հետ: Դա նույնպես համարում են փոխառություն իրանական աղբյուրից, սակայն հայրեն *ճարտ*- արմատի գոյությունը (*ճարտար*՝ «կերտող», *ճարտարապետ* եւ այլն) ցույց է տալիս, որ սա կարող էր լինել միանգամայն հայկական ծագումով բառ: Իսկ մյուս կողմից, բանի որ խոսքը հնագույն ժամանակների մասին է, իմաստ ունի խոսել միացյալ հայ-իրանական լեզվի ներքին բարբառային տարբերակների, այլ ոչ թե փոխառության մասին: Այսպիսով, կարող ենք համարել, որ *մարգարե* բառը միանգամայն հայկական է:

Բատյուշկովը, Վ. Կյուխենբերգերը, անդրադարձել են մարգարեությանը, իսկ Ա. Պուշկինը, Մ. Լերմոնտովը, Ն. Նեկրասովը եւ այլք նաեւ գրել են Մարգարե անվամբ կամ այդ բառը պարունակող անուններով բանաստեղծություններ: Այդ ավանդույթը մասամբ շարունակվել է հաջորդ դարերում, բայց դրանց մեծագույն մասը գրվել է մինչեւ Ի դարի սկիզբը: Պուշկինից հաշված՝ մոտ 85 տարիների ընթացքում: Ապա՝ շուրջ 110 տարի հետո, փաստորեն՝ վերջերս, 2011-ին լույս է տեսել Եւգենի Կամինսկու եւս մի նույնանուն բանաստեղծություն: Դժվար չէ նկատել օրինաչափությունը. մարգարեի կերպարին անդրադարձել են այն դարերում, երբ սպասվել են կամ պահանջված են եղել փոփոխություններ երկրի կյանքում: Շարքի առաջին՝ Ալեքսանդր Պուշկինի գործը գրվել է 1826-ին՝ Նախորդ տարվա Դեկտեմբերյան ապստամբության ձախողման տպավորությամբ: Կարելի է ենթադրել, որ Պուշկինի կարծիքով ձախողման պատճառն այն էր, որ մարդիկ պատրաստ չէին փոփոխությունների, եւ բանաստեղծի առաքելությունն է լրացնել այդ բացը ապագայի համար: Միխայիլ Լերմոնտովը գրել է իր Մարգարեն, երբ ամեն ինչ խախտնդվել է, եւ փոփոխությունների հույսը կորել է: Նիկոլայ Նեկրասովը գրել է 1861-ի բարեփոխումից հետո, որը արեւմտամետ մտավորականությունը համարեց թերի: Ապա գրվեցին մի շարք Մարգարեներ Առաջին աշխարհամարտի նախօրեին. այն, որ սպասվում էր մեծ արհավիրք, որից կարող էր փրկել միայն Աստծո ճշմարիտ խոսքը, զգում էին բոլորը:

Հետագայում, եթե չհաշվենք Անդրեյ Բելիի խորհրդապաշտական գործերը, մինչեւ ԻՎ դարը «մարգարեի» կերպարը ռուսական բանահյուսությունում գրեթե չէր հայտնվում. նախ՝ խորհրդային տարիներին Աստվածաշունչը գրեթե արգելքի տակ էր, եւ ապա՝ դրա կարիքը չէր էլ զգացվում. ռուսները ստեղծել էին աշխարհի ուժեղագույն կայսրությունը, որը, թվում էր, անհնար է կործանել, ուստի եւ մարգարեներին դիմելու խնդիր չկար:

Անշուշտ, իրականությունն այլ էր. կայսրությունն աստիճանաբար գլորվում էր անդունդը. շատերը լուրմ էին, ոմանք՝ չարախնդում, բայց կային եւ նրանք, ովքեր ցավում էին, որ չկան ճիշտ ուղղով տանող առաջնորդներ, ուսուցիչներ... մարգարեներ... Դրանցից էր Վլադիմիր Վիսոցկին՝ Ի դարի թերեւս ամենաակնառու եւ ամենաժողովրդական ռուս բանաստեղծը: «Մարգարե» անվամբ բանաստեղծություն նա չի գրել, բայց երգերից մեկում նկատել է.

*Пророков нет — не сыщешь днём с огнём,
Ушли и Магомет, и Заратустра.
Пророков нет в отечестве моём,
Но и в других отечествах — не густо.*

*Չիք մարգարե՝ փնտրի՛ր օրվա լույսում,
Անցան, չկան Մահմեդն ու Չրադաշտը:
Չիք մարգարե եւ իմ հայրենիքում,
Սակայն, այլ հայրենիքներում էլ շատ չեն:*

Եւ Կայսրությունը կործանվեց, եւ ռուսների առաջ կրկին, արդեն՝ բացահայտորեն ծառացան խնդիրներ: Սակայն մարգարեների հույսին լինելը հեռանկար չի խոստանում, ուստի ծնվում է Եւգենի Կամինսկու միանգամայն երգիծական Մարգարեն:

Այս շարքի բանաստեղծությունները կարելի է բաժանել մի քանի խմբի: Բովանդակությամբ առանձին դիրքում է շարքի առաջին՝ Ալեքսանդր Պուշկինի գործը: Մյուս հեղինակների գործերը ներկայացնում են Աստծո ճշմարիտ խոսք քարոզող մարգարեին եւ իրեն հակադրվող եւ հալածող ժողովրդին: Այս խմբի առաջին գործը Միխայիլ Լերմոնտովինն է: Եւս մի խումբ են կազմում են Անդրեյ Բեկի խորհրդապաշտական երկու գործերը, ինչպես նաեւ, կարելի է ասել, երգիծական գործերը (թերեւս նույնպես Լերմոնտովի գործին հետեւող): Եւ վերջապես կան գործեր, ուր պարզապես նկարագրվում են աստվածաշնչյան մարգարեները, օրինակ՝ Դմիտրի Մերեժկովսկու «Եսայի մարգարե» բանաստեղծությունը: Նման գործեր ունեն նաեւ արեւմտյան, մասնավորապես՝ անգլալեզու հեղինակները: Օրինակ Իսաակ Էւանի (Isaac Ewan) բանաստեղծությունը, որը պարզապես բանաստեղծաբար վերաշարադրում է Եմվայի որդի Միքեա մարգարեի եւ Աբաբ թագավորի պատմությունը: Սրանցից ժողովածուում ներառվել են հիմնականում առաջին խմբերի՝ իմաստասեր մարգարեներ նկարագրող գործերը: Վերջին խմբի գործերը ժողովածուում չեն ներառվել: Խորհրդապաշտական գործերը առհասարակ անհնար է թարգմանել. կարելի է միայն նոր լեզվով գրել նույնաոճ բանաստեղծություններ, բայց դրանք կվերածվեն ծաղրանմանակների, ինչպիսիք գրել էր Վլադիմիր Սոլովյովը, ծաղրելով խորհրդապաշտներին: Դրանցում մարգարե հասկացությունը հաճախ գործածվում է սոսկ որպես բառ, եւ թե որն է կապը «Մարգարե» վերնագրի եւ բանաստեղծության բովանդակության միջեւ, երբեմն այնքան էլ ակնհայտ չէ:

Ինչ վերաբերում է աստվածաշնչյան կերպարների եւ դեմքերի բանաստեղծական վերարտադրմանը, ապա դա այլ եւ այս ժողովածուի նպատակներից դուրս խնդիր է:

Որոշ չափով այդպիսին է նաեւ Դեյվիդ Յերբերտ Լաուրենսի «Մարգարե» բանաստեղծությունը (1922 թ.), որը, հաշվի առնելով կարճությունը, ստորեւ բերված է ամբողջովին:

David Herbert Lawrence — The Prophet

*Ah, my darling, when over the purple horizon shall loom
The shrouded mother of a new idea, men hide their faces,
Cry out and fend her off, as she seeks her procreant groom,
Wounding themselves against her, denying her fecund embraces.*

Դեյվիդ Յերբերտ Լաուրենս — Մարգարե

*Ա՛խ, սիրելի՛ս, երբ ծիրանի հորիզոնի վերելում նշմարվի
Պարուրված մայրը նոր գաղափարի, մարդիկ կթաքցնեն դեմքերը,
Կճշան ու կվանեն նրան, երբ նա իր բեղմնավոր փեսային կորոնի,
Կտրամադրեն իրենց նրա դեմ, կմերժեն նրա պտղաբեր գրկերը:*

Այստեղ հեղինակը հավանաբար նկատի ունի, որ նոր գաղափարները չեն ընդունվում հանրության կողմից: Սակայն սա կապ չունի խնդրի առարկա «մարգարե» հասկացության հետ, որը կապված է բարոյականության, քաղաքացիական պարտքի եւ հարակից այլ հասկացությունների հետ, այլ ոչ թե սոսկ նոր գաղափարների ընդունել- չընդունելու: Այստեղ գործ ունենք եւրոպական հասարակությանը հուզող նորարարության եւ անձի ինքնության հասկացությունների հետ, քանի որ նոր գաղափարը պարտադիր չէ, որ ճիշտ եւ օգտակար լինի

անծի եւ հանրության համար: Հնարավոր է, որ դա տվյալ պահին սոսկ առաջարկողին օգտակար թվա, սակայն վնասակար լինի հեռանկարում:

Վերջապես, իմաստ ունի երկու խոսքով անդրադառնալ նաեւ այս շարքում առանձնացող Ջուբրան Խալիլ Ջուբրանի (Kahlil Gibran) Մարգարեն (The Prophet) ստեղծագործությունը՝ գրված, այսպես կոչված, «արձակ բանաստեղծության» ոճով: Սա աչքի է ընկնում նաեւ իր ծավալով՝ ունի շուրջ 1000 տող, եւ անկախ դրա գեղարվեստական արժանիքներից (թերեւս ցածր. սա պարզագույն, ծեծված մտքերից բաղկացած մի գործ է, թեեւ (կամ հենց շնորհիվ դրա) այն մեծ ճանաչում է վայելում)՝ կրկին դուրս է այս ժողովածուի խնդիրներից:

Նկատենք, որ հայ գրականության մեջ Մարգարե անվամբ բանաստեղծություններ գրեթե չկան, ինչը որոշ չափով տարօրինակ է, եթե հաշվի առնենք, որ հայ ազգը ավելի քան ուուսը կանգնած է եղել համազգային մարտահրավերների առաջ: Պատճառը, թերեւս այն է, որ հայ ազգը բավարարվել է հենց աստվածաշնչյան կերպարներով՝ պահանջվող պահին պարզապես դիմելով Աստվածաշնչի համապատասխան կետին, եւ չի փորձել վերաիմաստավորել այն:

Այնուամենայնիվ կա առնվազն մեկ հանրաճանաչ գործ՝ Հովհաննես Թումանյանի Մարգարեն՝ գրված 1890 թվականին, որը ստորեւ բերվում է ամբողջությամբ:

Մարգարե

*Երբ որ վեհության կնիքը ճակատին
Եւ ճշմարտության սուրբ պատգամներով
Նա հայտնվեցավ մոլար աշխարհին
Եւ դարձ քարոզեց հրաթափ լեզվով,*

*Նրա աստվածային ծայնից սարսափած
Գիշերատեսիլ մարդիկ հուզվեցին,
Իրանց սեղանից վեր կացան հարբած,
Մոլեգնության մեջ աղաղակեցին.*

*— Ո՞վ ես դուն, արի՛, այս մեր հանցավոր
Ուրախությանը մասնակից եղիր,
Կամ թո՛ղ վայելենք մեր կյանքն անցավոր,
Թե չէ՝ խիստ պատժի քարերից փախի՛ր:*

*Սակայն անվիատ նա հառաջ գնաց
Անուշադիր յուր անծի վնասին,
Մոլորությունը ներելով մարդկանց՝
Հոգ տարավ նրանց փրկության մասին:*

*Եւ երբ որ լուսո նա ջահը ձեռքին
Մոտեցավ կորստյան փոսի եզերքին,
Ապերախտ ձեռքով ամբոխը խավար
Չարկեց, խորտակեց ջահը փրկարար:*

*Ժամանակ անցավ. թշվառ ամբոխին
Արդեն փորձանքը վրա էր հասած,
Երբ ուշքի եկավ, վայ տվեց գլխին.—
«Նա մարգարե էր, նա իրավ ասաց»:*

Ինչպես տեսնում ենք, այն գրված է միանգամայն ռուսական գրականության հունի մեջ, ավելին՝ ասես շարունակելով Միխայիլ Լերմոնտովի Մարգարեի շարադրանքը:

Ստորել կարճ անդրադառնամ ներառված գործերին՝ ըստ հեղինակների:

Ալեքսանդր Պուշկին

Սա առաջին դեմֆից գրված սերովբեի եւ նրան ուղարկած Աստծո հետ հաղորդակցման մի երեւակայական պատմություն է (չափազանց ազդեցիկ մանրամասնություններով պատկերված), ընդ որում տիեզերական աստիճանի. ամեն օր չէ, որ մարդիկ հանդիպում են սերովբեների եւ ոչ միայն հանդիպում, այլեւ մարմնապես եւ հոգեպես փոխակերպվում եւ լսում Աստծո ձայնը: Եւ Աստվածը կարգադրում է իրեն՝ պետք է հասկանալ՝ բանաստեղծին՝ «այրել սրտեր մարդկանց», այն է՝ ազդել մարդկանց վրա ամբողջ աշխարհում (անցնելով «ծովերն ու աշխարհները»): Սակայն Աստված չի մանրամասնում, թե հատկապես ի՞նչ հնարքներով եւ ի՞նչ ասելով բանաստեղծը պիտի «այրի սրտեր»: Միայն հասկացվում է, որ Նա պիտի լինի իմաստուն եւ չլինի սնախոս ու չարամաղծ: Ինչպես ասվեց, սա ոչ միայն առաջին, այլեւ, թերեւս, ամենաազդեցիկ Մարգարեն է, թեւեւ (կամ՝ բաւի որ) վերիրական դեպքեր է նկարագրում: Նկատենք, որ <http://russian-poetry.ru> կայքում մարգարեներին նվիրված բանաստեղծությունների շարքում այն ունի միայն երկրորդ վարկանիշը, զիջելով առաջին տեղը Լերմոնտովի Մարգարեին: Գուցե պատճառը հենց այն է, որ Պուշկինը պատմում է վերմարդկային դեպքերի մասին, մինչդեռ Լերմոնտովը նկարագրում է արդեն առօրեական եւ շատ ավելի քաջածանոթ իրողությունը:

Միխայիլ Լերմոնտով

Ինչպես ասվեց, այսօր սա այս շարքի առավել ժողովրդականություն վայելող բանաստեղծությունն է: Ինչպես ասվեց, սա շատ ավելի հողակցված իրողության նկարագրություն է: Ու, թերեւս, հենց դա է պատճառը, որ հետագա հեղինակներից շատերը իրենց համանուն բանաստեղծությունները կառուցել են, որպես այս մեկի շարունակություն կամ վերաիմաստավորում:

Փաստորեն սա կարելի է դիտել, որպես Պուշկինի Մարգարեի հետ կատարված դեպքերի շարունակություն: Մարգարեն փորձում է կատարել Աստծո պահանջը, սակայն «ծովեր ու աշխարհներ» անցնելու գործը չի հասնում. նրան քարկոծում են նույնիսկ մերձավորները, եւ Նա ստիպված հեռանում է մարդկանցից. լիակատար ծախողում: Սա է Լերմոնտովի բանաստեղծության էությունը. բավական ողբերգական:

Ֆյոդոր Բերգ

Բերգը իր փոքրիկ Մարգարեում ասես բացումը է փակագծերը, ներկայացնելով այն, ինչը, գուցե ասում էր մարգարեն իր քարոզների ընթացքում. որ պետք է քանդել հին տաճարը, իսկ նոր սերունդը կկառուցի նորը, պնդելով, որ եթե մարդիկ ուզեն, այդպես էլ կլինի: Տաճարի ակնարկը պարզ հղում է Հիսուսի ավետարանական խոսքերին, բայց ակնհայտ է, որ Բերգի բանաստեղծության հերոսները չէի հետևելու մարգարեի կոչերին:

Միխայիլ Ռոզենգեյմ

Ռոզենգեյմը կարծես ի մի է բերում նախորդ շարադրանքները: Նա ներառում է եւ Պուշկինյան փուլը՝ մարգարեի կոչումը, եւ Լերմոնտովյան

անհաջողությունները, սակայն ի տարբերություն Լերմոնտովի մարգարեից՝ Աստված չի թողնում, որ Նա հեռանա անապատ (որից Աստված արդեն հանել էր իրեն. հիշենք Պուշկինի մարգարեին), եւ ավարտում է լավատեսական՝ պայթարը շարունակելու հույսով:

Նեկրալայ Նեկրասով

Նեկրասովի Մարգարեն դուրս է վերոհիշյալ շարքից: Նեկրասովը չի մանրամասնում, թե ի՞նչ է մասնավորապես անում մարգարեն, թեեւ ակնարկում է, որ լավ հեռանկարներ իրեն չեն սպասում իր քարոզչական գործում, սակայն Նա պատրաստ է խաչվել հանուն իր գաղափարների (եւ անխուսափելիորեն լինելու է խաչված): Սա, թերեւս, ամենաողբերգական ու վեհ Մարգարեն է:

Վլադիմիր Սոլովյով

Սակայն ժամանակով հաջորդ Մարգարեն՝ Սոլովյովի, արդեն ողբերգական կերպար չէ, այլ խեղկատակ: Ժամանակները փոխվում են. մոտենում է Առաջին աշխարհամարտը, որը գլխավայր էր շրջելու համաշխարհային բարոյականությունը եւ հեռացնելու մարդկանց Աստծուց: Քանի որ այն, ինչ վիճակված էր տեսնել մարդկությանը այդ տարիներին, գերազանցում էր բոլոր պատկերացումները սարսափի մասին:

Սոլովյովի մարգարեն արդեն չի էլ հալածվում օտարների եւ մերձավորների կողմից. նրան պարզապես անտեսում են: Նա չկա իրենց համար: Նա չկա Նույնիսկ շների համար: Քանի որ Նոր ժամանակներում չկա հավատ:

Նիկոլայ Գումիլյով

Գումիլյովը արդեն կարծես թե վիճում է Սոլովյովի հետ, թեեւ մի տեսակ անվստահ: Իր կարծիքով մարգարեներ դեռ կան, թեեւ արդեն չկան խորամներ (չկա հավատ): Բայց Գումիլյովի մարգարեն ինքն էլ է արդեն կասկածում սեփական գիտակցության հաշվով՝ ընդունելով, որ ինքը գուցե խելագուրկ է, բայց իր հոգին գոնե սուրբ է: Սակայն Նա, միեւնոյն է, ծիծաղի առարկա է:

Վիկտոր Մյուր

Եւ Մյուրի համար մարգարե առհասարակ էլ չկա. ամեն ինչ շրջվեց եւ վերադարձավ Պուշկինին: Սակայն Մարգարեի կարիք կա. երկու տարուց սկսվելու է Աշխարհամարտը. Մյուրը դա լավ է գգում: Մի բան պետք է անել՝ ցրելու համար շուրջ բոլորը հաստատված խաբկանքը: Իսկ մարգարե չկա:

Եւգենի Կամինսկի

Իսկ Կամինսկու Մարգարեին մենք արդեն շատ լավ գիտենք. Նա մեր ժամանակակիցն է: Պուշկինից՝ Գումիլյով ամբողջ ուղին այդ մարգարեն ինքն էլ գիտի: Եւ ահա Նա, իրոք տեսնելով մոտալուտ ջրհեղեղը, այն է՝ կործանումը, սակայն լինելով ի՞ր (մե՛ր ժամանակի) մարդը սոսկ առաստաղն է թթոտում՝ մտածելով. իսկ իմաստ ունի՞ր արդյոք Նեկրասովի մարգարեի պես կյանքը զոհել: Ու զսպելով ամոթը՝ իր լռության դիմաց ստանում է պարգև՝ արատի պատվարը հանդիսացող

անձանց ձեռքից: Եւ մտածում է, որ ամենալավ տեղը թերեւս Եւրոպան
է, ուր երբեք չեն եղել մարգարէներ, քանի որ մեռածին ճշմարտութիւնը
պետք չէ, եւ ուր կարելի է հանգիստ ապրել մինչեւ... անխուսափելի
աղետը, որի մոտեցումը մարգարէն տեսնում է...

Դիմանկարը՝ Օրբելի Կիպրեանի ու, 1827 թ.



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ՊՈՒՇԿԻՆ
АЛЕКСАНДР СЕРГЕЕВИЧ ПУШКИН

ՄԱՐԳԱՐԷ
ПРОРОК

Духовной жаждою томим,
В пустыне мрачной я влачился, —
И шестикрылый серафим
На перепутье мне явился.
Перстами легкими как сон
Моих зениц коснулся он.
Отверзлись вещие зеницы,
Как у испуганной орлицы.
Моих ушей коснулся он, —
И их наполнил шум и звон:
И внял я неба содроганье,
И горний ангелов полет,
И гад морских подводный ход,
И дольней лозы прозябанье.
И он к устам моим приник,
И вырвал грешный мой язык,
И празднословный и лукавый,
И жало мудрыя змеи
В уста замерзшие мои
Вложил десницею кровавой.
И он мне грудь рассек мечом,
И сердце трепетное вынул,
И угль, пылающий огнем,
Во грудь отверстую водвинул.
Как труп в пустыне я лежал,
И бога глас ко мне воззвал:
«Восстань, пророк, и виждь, и внемли,
Исполнись волею моею,
И, обходя моря и земли,
Глаголом жги сердца людей»

1826



Բողով ծարավ՝ մռայլասեւ
Անապատում էի շրջում,
Եւ սերովբե մի վեցաթեւ
Ինձ երեւաց ուղեխաշում:
Երազաքաշ իր մատներով
Նա բիբերիս դիպավ փութով,
Ու բացվեցին բիբերը իմ
Զերդ արծվուհու աչքեր ուշիմ:
Ականջներիս թեթեւ դիպավ,
Եւ մեջն աղմուկ, զողանջ ընկավ.
Եւ լսեցի երկնի ցնցումը,
Եւ հրեշտակաց թռիչքը վեհ,
Եւ օձերի սողումը գոհհ,
Եւ դաշտային որթի աճումը:
Եւ շրթունքներս նա բացեց,
Եւ մեղավոր լեզուս պոկեց՝
Եւ սնախոս, եւ չարամաղձ,
Եւ իմաստուն օձի խայթոց
Նա իր աչով արշունագօծ
Դրեց բերանը իմ սառած:
Եւ կուրծքը իմ հատեց թրով,
Եւ սիրտս թրթռուն հանեց,
Եւ բոցավառ ածուխ՝ հրով,
Բաց կրծքիս մեջ նա տեղադրեց:
Զերդ դի ընկած էի գետնին,
Եւ ձայնն աստծո զիմեց վերին.
«Ե՛լ, մարգարե՛, եւ լո՛ւր, եւ տե՛ս, եւ
Տոգորվելով կամքովս անանց՝
Կտրի՛ր ծովերն ու աշխարհները,
Բայով աչրի՛ր սրտեր մարդկանց»:

Բնթանկար, 1837 թ.



ՄԻՋԽԱՅԻԼ ՅՈՒՐՅԵՎԻՉ ԼԵՐՄՈՆՏՈՎ
МИХАИЛ ЮРЬЕВИЧ ЛЕРМОНТОВ

ՄԱՐԳԱՐԷ
ПРОРОК

С тех пор как вечный судия
Мне дал всеведение пророка,
В очах людей читаю я
Страницы злобы и порока.

Провозглашать я стал любви
И правды чистые ученья:
В меня все ближние мои
Бросали бешено камня.

Посыпал пеплом я главу,
Из городов бежал я нищий,
И вот в пустыне я живу,
Как птицы, даром божьей пищи;

Завет предвечного храня,
Мне тварь покорна там земная;
И звезды слушают меня,
Лучами радостно играя.

Когда же через шумный град
Я пробираюсь торопливо,
То старцы детям говорят
С улыбною самолюбивой:

«Смотрите: вот пример для вас!
Он горд был, не ужился с нами.
Глупец, хотел уверить нас,
Что бог гласит его устами!

Смотрите ж, дети, на него:
Как он угрюм и худ и бледен!
Смотрите, как он наг и беден,
Как презирают все его!»

1841



Էրբ դատավորն հավերժատես
Տվեց ինձ շնորհ մարգարեի,
Մարդկանց աչքում կարդում եմ ես
էջեր մաղձի, արատների:

Ազդարարել ես սկսեցի
Սիրո, ճշմարտության ուսմունքը.
Մերձավորներս նետեցին
Վրաս մոլի բոլոր քարունքը:

Գլխիս մոխիր ես ցանեցի,
Քաղաքներից փախա աղքատս,
Անապատում բնակվեցի,
Եւ կերն է իմ աստծո տվածը.

Ապրում եմ բարձրլալի ուխտով,
Հլու են ինձ արարածները.
Ուրախ խաղում են շողերով
Եւ ունկնդիր են ինձ աստղերը:

Իսկ երբ քաղաքը աղմկոտ
Արագորեն կտրում-անցնում եմ,
Մերունինքը ինքնագոհ
Ժպտով որդիներին ասում են.

«Տեսե՛ք. ահա ձեզ օրինակ.
Հպարտ էր, չսանձեց մտքերը
Հիմար. պնդում էր շարունակ,
Թե իր շուրթով խոսում է Տերը:

Նայե՛ք, որդի՛ք, նրան հիմա.
Որքան նա խեղճ է ու տկար է,
Տեսե՛ք, որքան նա մերկ, անճար է,
Որքան արհամարհված է նա»:

Լուսանկարը՝ Վ. Վ. Կոմարովի 1891 թ. ժողովածուից (վերահսկված):



ՖԵԴՈՐ ՆԻԿՈԼԱՅԵՒԻՉ ԲԵՐԳ
ФЕДОР НИКОЛАЕВИЧ БЕРГ

ՄԱՐԳԱՐԷ
ПРОРОК

Он шел по селам, городам,
 Он говорил: «Настало время!
 Пора разрушить ветхий храм,
 Создаст иной иное племя!»
 С упрёком горьким осмеля
 Их боязливые сомненья,
 На них он твердо отвечал,
 С могучей силой убежденья:
 «Когда хотя один из нас
 Сказал той новой жизни слово,
 Заря ее уж занялась,
 Скончалось царствие былого!»

~1861



*Ասա գլուղերում, քաղաքներում
 Ասում էր. «Արդ հասել է ժամը,
 Տաճարն է պետք քանդել խարխուլ,
 Այլ ցեղը կկերտի մեկ այլը»:
 Կշտամբանքով էր նա ծաղրում
 Իրենց վախկոտ կասկածանքները,
 Նրանց հստակ պատասխանում,
 Բերում հզոր իր փաստարկները.
 «Եթե գեթ մեկը մեզանից
 Ասաց այդ նոր կյանքի մի խոսքը,
 Այգն իսկ դրա արդեն բացվեց,
 Մեռավ հնի արքայութունը»:*

Լուսանկարը՝ 1902 թ. ժողովածուից (վերամշակված):



ՄԻԽԱՅԻԼ ՊԱՎԼՈՎԻՉ ՌՈԶԵՆԳԵՅՄ
МИХАИЛ ПАВЛОВИЧ РОЗЕНГЕЙМ

ՄԱՐԳԱՐԷ
ПРОРОК

Когда Господь открыл мне вежды
И скверну мира показал,
Когда, испуганный, одежды
я, полный скорби, разорвал;

Когда - в порыве сокрушенья -
Бежать в пустыню я хотел,
Чтобы не видеть униженья,
И черноты, и грязи дел;

Тогда, сверкая мне из тучи,
И гласом гнева и суда,
Он - малодушному Могучий -
Изрек мне грозное «куда?»

«Куда? - воззвал Он громогласно. -
Куда, лукавый человек?
Бежишь в пустыню безопасно
Влачить бесплодно жалкий век?

Не сокрушенья, не молитвы -
Мне нужен истинный пророк,
Мне нужен муж для смелой битвы,
Мне нужен молот на порок!

Не это рабское бессилье
Потребно смелому бойцу.
Иди пред злобу и насилие
И с ними стань лицом к лицу!»

И я пошел. Вражду, гоненье
Я видел, знал и перенес.
Я слышал пошлое глумленье
И вопли гнева и угроз,

И фарисея шепот желчный,
И вой бессмысленный глупца...
Но я иду - набат немолчный
Глаголов правды - до конца.

Не кроюсь: пусть в меня каменья
Бросают ближние мои...
Иду без злобы и смущенья
Во имя правды и любви.

1864*



Լոր բաց արեց Տերն իմ աչքերը
Եւ ցուց տվեց աղտն աշխարհի,
Երբ, վախեցած, իմ հագուստները
Ես լի ողբով, պատահեցի.

Երբ մեծ էր դեռ վշտի մղումը,
Եւ անապատ էի փախչում,
Որ շտեմանեմ ես ստորացումը
Եւ սեն ու կեղտը այս կյանքում.

Այդժամ փայլով ամպի խորքից եւ
Յամման, դատի ձայնով ազդու
Ձորեղը՝ Նա, որ փոքրոգի եմ
Ասաց ինձ, եւ ահեղ. «Այդ ո՞ր»:

«Այդ ո՞ր,— Նա բարձրաձայն ասաց ինձ,—
Այդ ո՞ր ես դու փախչում, նենգ մարդ:
Անապատում հիասթափված դու
Կյանքովդ փուշ ապրես անդարդ»:

«Ո՛չ աղոթքներ եւ ո՛չ վշտեր այլ,
Ինձ պետք է մարգարե ճշտի,
Ինձ պետք է այր, որ անվեհեր է,
Ինձ պետք է մուրճ՝ ընդդեմ շարի:»


«Ո՛չ ստրկական անգործություն, այլ
Մեծ կամք՝ քաջ մարտիկին հարիր:
Վանիր շարիքն ու բռնությունը.
Դրանց դու դեմ առ դեմ կանգնիր»:

Եւ գնացի: Ես թշնամանքը
Տեսա, գիտցա ու կրեցի:
Ես լսեցի եւ անարգանքը
Եւ զայրույթի ոռնոց ու ճիչ:

Եւ փարիսեական շշուկը
Եւ հիմարի ոռնոց անմիտ...
Բայց պիտ շարժվեմ՝ լարած բազուկս՝
Անյուր զողանջ՝ խոսք ճշմարիտ:

Չեմ թաքնվում. թող որ քարունքը
Նետեն վրաս մերձավորներ...
Կանցնեմ անքեն՝ զսպած հուզմունքս՝
Հանուն սիրո իմ անձնվեր:

Լուսանկարը՝ Ս. Լ. Լեւիցկու, ~1871-72 թթ.



ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ ՆԵԿՐԱՍՈՎ
НИКОЛАЙ АЛЕКСЕЕВИЧ НЕКРАСОВ

ՄԱՐԳԱՐԷ

ПРОРОК

Не говори: "Забыл он осторожность!
Он будет сам судьбы своей виной!..."
Не хуже нас он видит невозможность
Служить добру, не жертвуя собой.

Но любит он возвышенней и шире,
В его душе нет помыслов мирских.
"Жить для себя возможно только в мире,
Но умереть возможно для других!"

Так мыслит он - и смерть ему любезна.
Не скажет он, что жизнь его нужна,
Не скажет он, что гибель бесполезна:
Его судьба давно ему ясна...

Его еще покамест не распяли,
Но час придет - он будет на кресте;
Его послал бог Гнева и Печали
Раба земли напомнить о Христе.

1874




Այ, մի՛ առա. «Կորցրել է զգուշութիւնը.
Ինքն իր բախտի պատճառը կդառնա»:
Մեզնից էլ լավ գիտի անհնարութիւնը
Անիքնագոհ՝ լինել բարուն ծառա:

Բայց սերը իր, ավել է վեհ ու խորը,
Հոգում շունի նա աշխարհիկ մտքեր:
«Կյանքն աշխարհում միայն լինում է քոնը,
Բայց այլց համար կարաս դու մեռնել»:

Իր միտքը այդ է՝ մահն իրեն անդուր չէ,
Նա չի ասի, թե պետք է կյանքն իրեն,
Նա չի ասի, թե կործանումն իզուր է.
Ճակատագիրն իր նա գիտի արդէն...

Նրան դեռեւս չեն գամել, խաչված չէ,
Բայց ժամ կգա՝ նա կլինի խաչին.
Յասման, Թախծի աստծուց նա ուղարկված է,
Որ միշտ հիշեն ստրուկները Քրիստոսին:

Դիմանկարը՝ Իվան Կրամնիկով, 1885 թ.



ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ՍՈԼՈՎՅՈՎ
ВЛАДИМИР СЕРГЕЕВИЧ СОЛОВЬЕВ

ԱՊԱԿԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՆ
ПРОРОК БУДУЩЕГО

Угнетаемый насилием
Черни дикой и тупой,
Он питался сухожилием
И яичной скорлупой.

Из кулей рогожных мантию
Он себе соорудил
И всецело в некромантию
Ум и сердце погрузил.

Со стихиями надзвездными
Он в сношение вступал,
Проводил он дни над безднами
И в болотах ночевал.

А когда порой в селение
Он задумчиво входил,
Всех собак в недоумение
Образ дивный приводил.

Но, органами правительства
Быв без вида обретен,
Тотчас он на место жительства
По этапу водворен.

~1886



*Բռնությունը նա խիստ ճնշված էր՝
Վայրենի, բութ ամբոխի.
Ձիլ, ոսկոր էր իր կերածը
Ու կճեպը ձվերի:*

*Խսիրից մի պատմուճան էր
Իր համար նա պատրաստել
Ու մեռելակոշության մեջ
Միտքն ու սիրտը ընկզմել:*

*Աստղերից վեր տարերքները
Նա իր հետ էր առնչում,
Անդունդում քաշում օրերը,
Գիշերում ճահիճներում:*

*Իսկ երբեմն, երբ քաղաքն էր
Նա մտնում մտամոլոր,
Տեսքն իր շների զարմանքն էր
Առաջացնում շուրջ բոլոր:*

*Բայց, երբ որ կառավարության նա
Աչքն ընկավ առանց գրանցում,
Նա բնակության իր վայրը
Աքսորով ստացավ իսկույն:*

Լուսանկարը ~1905—06 թթ.



ՆԻԿՈԼԱՅ ՍՏԵՊԱՆՈՎԻՉ ԳՈՒՄԻԼՅՈՎ
НИКОЛАЙ СТЕПАНОВИЧ ГУМИЛЁВ

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԸ
ПРОРОКИ

И ныне есть еще пророки,
Хотя упали алтари,
Их очи ясны и глубоки
Грядущим пламенем зари.

Но им так чужд призыв победный,
Их давит власть бездонных слов,
Они запуганы и бледны
В громадах каменных домов.

И иногда в печали бурной,
Пророк, не признанный у нас,
Подъемлет к небу взор лазурный
Своих лучистых, ясных глаз.

Он говорит, что он безумный,
Но что душа его свята,
Что он, в печали многодумной,
Увидел светлый лик Христа.

Мечты Господни многооки,
Рука Дающего щедра,
И есть еще, как он, пророки —
Святые рыцари добра.

Он говорит, что мир не страшен,
Что он Зари Грядущей князь...
Но только духи темных башен
Те речи слушают, смеясь.

1903



յսօր էլ կան մարգարեներ դեռ,
Թեեւ չկան էլ խորաններ,
Աչքերն իրենց պայծառ ու վեհ են՝
Արշալույսի գալիք բոցեր:

Բայց չեն սիրում գոռոզ գոշերը,
Խոսքից են անհատակ ճնշվում,
Նրանք գունատ ու անաբեկ են
Մեծ քարաշեն զանգվածներում:

Երբեմն բուռն է ընկճվածքը,
Եւ մարգարեն չճանաչված
Հանում է վեր լազուր հայացքը
Իր ճառագող, պայծառ աշաց:

Ասում է՝ ինքը խելագուրկ է,
Սակայն, որ սուրբ է իր հոգին,
Որ ինքը բազմախոհ սգում իր
Տեսել է դեմքը Քրիստոսի:

Տիրոջ տենչերը բազմաակ են,
Առատ է ձեռքը Տվողի,
Եւ այլ մարգարեներ էլ կան դեռ՝
Սուրբ ասպետները բարիքի:

Ասում է նա՝ աշխարհն անեղ չէ,
Իշխանն է նա Գալիք Լույսի...
Բայց ամրոցի մուկ՝ ոգիները
Հանում են խոսքն ալդ ծիծաղի:



ՄԱՐԿԱՐԷ
ПРОРОК

Где ты, нетронутый страстью,
Благословенный пророк;
Где ты, могущий со властью
Дать нам желанный урок?

Где ты, держащий здраво
Истины слово сказать;
Где ты, имеющий право
И разрешить, и связать?

Мир по тебе стосковался
В жадной, смертельной тоске...
О, если б ты отозвался
В дальнем хотя далеке!

В нас настроенье недужно.
Наши закрыты глаза;
Смелое слово нам нужно,
Чтоб разрядилась гроза!

Тучи над миром нависли
И все чернеет кругом;
Нужен нам царственной мысли
Неумолкающий гром!

Тучи спускаются ниже,
Кутают землю в туман;
Где ты, пророк наш? — гряди же
Всюдный рассеять обман!

~1912



*Ո՞ր ես, կրքից դու անեղծդ,
Օրհնաբանված մարգարե.
Ո՞ր ես, այնքան դու զորեղդ՝
Տաս ցանկալի մեզ դասեր:*

*Ո՞ր ես, դու որ ի զորու ես
Խուսք ճշմարիտ մեզ ասել,
Ո՞ր ես, որ իրավասու ես
Բաց թողնել, բայց եւ կապել:*

*Քեզ է կարոտ այս աշխարհը՝
Խիստ մահացու ցավերում...
Օ՛հ, թե հնչեր գեթ քո ձայնը
Թող որ՝ հեռու կողմերում:*

*Մեր հոգիներն անառողջ են,
Աչքը մեր կույր ու փակված.
Պետք է հիմա մեզ քաջ խոսքը՝
Վերջ տա շանթին կուտակված:*

*Ողջ աշխարհին մուժ ամպեր են
Սեւ են կողմերը ամեն.
Արքայական լուկ մտքերը
Որոտացող կփրկեն:*

*Վայր են իջնում տե՛ս ամպերը,
Մեզ է պատում ողջ երկիր.
Ո՞ր ես դու, եկ, մարգարե՛ մեր,
Ամենուրձա սուտ՝ ցրի՛ր:*

Լուսանկարը՝ «Пиршество живых» Ժողովրդուրի կազմից, ~2007-12 թթ.



ԵՒԳԵՆԻ ՅՈՒՐՅԵՎԻՉ ԿԱՄԻՆՍԿԻ
ЕВГЕНИЙ ЮРЬЕВИЧ КАМИНСКИЙ

ՄԱՐԳԱՐԷ
ПРОРОК

Жизнь обростала складками барокко,
на площадях бесчинствовал порок...
А лирик в чистом рубище пророка
поплёвывал уныло в потолок.

Имело ль смысл витийствовать с балкона,
предсказывая толпам времена,
что истину поставят вне закона
и числами заменят имена?!

Уж он-то знал, в безбожной Ниневии,
хоть внемли тьме, хоть немоте внемли,
а жизнь давно есть форма анемии,
и вкуса не имеет соль земли.

А во дворе в картузе птицелова
пастух, свистя, пуская под нож овец...
молчал пророк и всё не мог на слово
заветное решиться наконец.

Он думал: ну на что еще годится
Пророк, открывший рот, как не на смерть?!
И даже не глядел прохожим в лица,
самим собою быть боясь посмерть.

Он был способен только на мычанье,
когда ему от имени толпы
вручали статуэтку за молчанье
порока бесноватые толпы...

Он чувствовал, что скоро будет потопу,
и маялся: не время ли ему
по-тихому отчаливать в Европу,
где выше слова ценят тишину?

Где с совестью не будет той мороки,
не равняет чернь, какого, мол, рожна,
где попросту не водятся пророки,
поскольку правда мёртвым не нужна.

2011



Մատեն են կյանքը բարոկկյան ծալքերը,
արատն է մոլեգնում փողոցներում...

Պոետն՝ հագած մարգարեի լաթերը,
տրտում սոսկ առաստաղն էր թքոտում:

Իմաստ ունե՞ր՝ խոսեր, ասեր իր միտքը,
ամբոխներին օրերն այն գուշակեր,
երբ օրենքից կվտարվի ողջ ճիշտը,
եւ անունները կգարձեն թվեր:

Նա նինվեում այդ անաստված տեսել էր.
լսիր խավար, թե համրություն լսիր,
իսկ կյանքն արդ անարյունության մի ձեւ է,
եւ աղն երկրի այլեւս համ չունի:

Իսկ թռչնորսի գլխարկ դրած հովիվը
բակում սուլում էր, ոչխարներ մորթում...
լուռ մարգարեն նվիրական իր միտքը
արտաբերել այդպես էլ չէր վճռում:

Խորհում էր նա. իսկ էլ ինչի՞ համար է
պետք մարգարեն խոսող, թե ոչ մահվան:
Մարդկանց դեմքին նայելն էլ իսկ դժվար էր.
վախում էր ինքն իրեն լինել նման:

Իր մոտ ստացվում էր սոսկ մի կերպ մայելը,
երբ որ իրեն՝ անվամբ ամբոխ հոտի
հանձնում էին իր լուռության պարզելը
զիվահարված սյուները արատի...

Նա զգում էր, որ հեղեղն արդեն շատ մոտ է,
եւ երկմտում էր՝ պահը չէ՞ արդյոք
հանգիստ անցնել-գնալ դեպի Եւրոպա,
որտեղ հարգի է լուռություն, ոչ խոսք:

Ուր չեն լինում խղճի հետ խնդիրներ, եւ
ամբոխը չի գոռա, թե մեր ինչի՞ն,
ուր չեն լինում երբեք մարգարեները,
զի ճշմարիտը պետք չէ մեռածին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժողովածուի մասին	3
Ալեքսանդր Պուշկին. <i>Մարգարե</i>	8
Միխայիլ Լերմոնտով. <i>Մարգարե</i>	10
Ֆյոդոր Բերգ. <i>Մարգարե</i>	12
Միխայիլ Ռոգենգեյմ. <i>Մարգարե</i>	14
Նիկոլայ Նեկրասով. <i>Մարգարե</i>	16
Վլադիմիր Սոլովյով. <i>Ապագայի մարգարե</i>	18
Նիկոլայ Գումիլյով. <i>Մարգարեները</i>	20
Վիկտոր Մյուր. <i>Մարգարե</i>	22
Եւգենի Կամինսկի. <i>Մարգարե</i>	24